# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեր №

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐՏԱԿ ՇԱԲՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Շաբոյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2016 թվականի փետրվարի 4-ի N02/23.22/1355-16 հանձնարարականի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը քննարկելով ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր), հայտնում է հետևյալը.

««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 10-րդ հոդվածով կատարվող փոփոխության համաձայն՝ օրենքի 36-րդ հոդվածում սահմանվում են տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների համար տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ նախատեսվող տուգանքի չափերը: Միևնույն ժամանակ, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով սահմանվում են տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձի համար վարչական պատասխանատվության տեսակները: Ստացվում է, որ նույն արարքի համար (օրինակ՝ հակամրցակցային համաձայնություն կնքելու,

Առևտրի և շուկաների կարգավորման վարչություն
Կատարող՝ Ազգուշ Էլազյան
011 597153

անբարեխիղճ մրցակցության գործողության համար) պատասխանատվության են ենթարկվում նշյալ նախագծերի իմաստով տարբեր սուբյեկտներ՝ տնտեսվարող սուբյեկտը և այդ տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձը, որի տուգանքը գործնականում վճարվում է կրկին նույն տնտեսվարող սուբյեկտի միջոցներից:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ առաջարկում ենք այն դեպքերում, երբ պատասխանատվության սուբյեկտ է հանդիսանում տնտեսվարող սուբյեկտը, բացառել տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձի վարչական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ իր պարտականությունները ոչ պատշաճ կատարելու պատճառով նույն տնտեսվարող սուբյեկտը կարող է նրան ենթարկել պատասխանատվության այլ օրենքներով:

Միաժամանակ, հայտնում ենք, որ միևնույն արարքի համար իրավաբանական և ֆիզիկական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դրույթներ ամրագրված են նաև ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայումս շրջանառվող Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության նոր օրենսգրքի նախագծում, ինչի վերաբերյալ նախարարությունը հայտնել է իր առարկությունները:

Կից՝ ներկայացվում են Նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մրցակցության բնագավառներում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝



ԿԱՐԵՆ ՃՇՄԱՐԻՏՅԱՆ

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) նախատեսվում են մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ հստակեցվում են հակամրցակցային համաձայնությունների և գերիշխող դիրքի չարաշահման դրույթները, ինչպես նաև սահմանվում են համաձայնությունները հակամրցակցային չհամարելու հստակ հիմքեր և չափանիշներ: Սահմանվում է նաև տուգանքների որոշման այլ մոտեցում՝ կախված տնտեսվարող սուբյեկտի նախորդ տարվա հասույթի չափից և վարչական պատասխանատվություն է նախատեսվում պետական մարմինների և տնտեսվարող սուբյեկտների պաշտոնատար անձանց համար:

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

??????? ?????????

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

Նախագծի  գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով *առաջարկվում է* ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի դրույթները, (մասնավորապես՝ տուգանքի կիրառման մեխանիզմները, հակամրցակցային համաձայնությունների և գերիշխող դիրքի չարաշահման դրսևորումները և այլն) համապատասխանեցնել ԵՏՄ իրավական ակտերով սահմանված կարգավորումներին, *և* Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում ազդեցություն ***չի նախատեսվում:***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ                                        ՍԵՐԳԵՅ ԱՎԵՏԻՍՅԱՆ